ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ,ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,ՏՆՏԵՍԱԿԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N

24 հունիսի 2024 թվական

Տեղի ունեցավ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի N 01 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Լիլիթ Ենգիբարյանը, Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը և Հրայր Ասատրյանը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետի կողմից ներկայացված <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին >> նախագիծը՝ Խոյ համայնքի 2024 թվականի հունիսի 26-ի ավագանու հերթական նիստում :

ՄԺԾԾ-ով ներկայացվել է կանխատեսվող Խոյ համայնքի հաջորդող 3 տարիների եկամուտները, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղություններն ըստ ոլորտների, որոնք բերելու են Խոյ համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

Խոյ համայնքի 2025-2027թթ.. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

Նիստին ներկա գտնվողների բոլոր հարցերը ստացան պատասխաններ և հիմնավորումներ:

Հանձնաժողովի ներկա անդամները ավագանու որոշմների նախագծերի վերաբերյալ տվեցին դրական եզրակացություն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ